

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ
ԵՎ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

Ա. Ս ՄԱՐԻՐԱՅՈՒՅԱՆ

«Զիք է պատմութիւն առանց ժամանակագրութեան», — դրում է Խորենացին, բայց և չիք պատմութիւն առանց պարբերացման: Պարբերացումը ինքը ժամանակագրութիւն է, բայց իմաստավորված ժամանակագրութիւն — ժամանակագրութիւնը արձանագրում է, իսկ պարբերացումը բացահայտում:

Ժամանակագրութիւնը պատմութեան համար եթէ փաստ է, առանց նախնական կապակցութիւնների, ապա պարբերացումը թռիչք է, որ կտրում է իր անհրաժեշտ համախառն շրջանցելով ժամանակագրութեան բազմաթիվ կամուրջներ:

Պարբերացումը պատմութեան և պատմաբանի ելակետն է:

Քանի որ պարբերացումը ինչ-որ չափով ժամանակագրութիւն է, ապա որոշ դեպքում առողջակի նույնանում է ժամանակագրութեան հետ կամ փոխարինվում ժամանակագրութեամբ: Եւ թերեւ կարելի է անվանել ժամանակագրական պարբերացում:

Պարբերացում կատարվում է նաև ժամանակագրութեան միավորների մեջ ընկած պատմութեան ընդհանուր շրջաններով՝ քաղաքական, լեզվական, ժանրային և այլն: Այդպիսի պարբերացումը կարելի է անվանել ընդհանուր պարբերացում:

Առաջին դեպքում սկզբունքը թիվն է, երկրորդ դեպքում՝ երևույթը:

Պարբերացման այս երկու ձևերն էլ կիրառվում են շատ տարբերակներով — և այդտեղ արտահայտվում է հետադուրս իմացականութիւնը, գիտական մեթոդաբանական և հասարակական փոփոխումը, և դրանով էլ պայմանավորում՝ թե որքան է հաջող և ճշմարիտ:

Եթէ պարբերացումը դուրս է գալիս առարկայի սահմանումից և դառնում է նշանախեց նրա ընդհանուր և դերի բացահայտման համար, — այդպիսի պարբերացումը կարող է լինել գիտական:

Բայց եթէ այն չի ընդգրկում առարկայի ճշգրիտ ոլորտը և ճանապարհ է տալիս թյուրմարտման և գայթակու, այդպիսի պարբերացումը ձեւական է:

Տեսնենք, թե ինչ ընդհանուր են ունեցել նախաարեղյանական պարբերացումները. կամ ավելի ճիշտ՝ հայ հին գրականութեան պատմութեան ինչպիսի ելակետ է եղել:

Արեղյանը, ներկայացնելով իր պարբերացումը, գրում է.

«Պերիոդիզացիան կատարված է ոչ թէ ձեւականորեն, ինչպես սովորաբար վարվում են՝ բաժանելով անգիր (բանավոր) գրականութեան և գրավոր դպրութեան — V դարից ի վեր, այլ բնորոշված դպրութեան»¹:

Այսպես, Արեղյանը նախորդ պարբերացումները համարում է ձեւական և հիշատակում մի ելակետ՝ անգիր գրականութիւն և գրավոր դպրութիւն:

Պարբերացում նախաարեղյանական շրջանում կատարվել է տարբեր սկզբունքով. սակայն բոլոր դեպքերում պահպանելով անգիր և գրավոր դպրութեան երկու շրջանների բաժանումը: Միջոց են ծառայել հիմնականում լեզուն և արտաքին հանգամանքները, արտաքին ազդեցութիւններ:

Այսպես, Գաթրճյանը, ինչպես ինքն է ասում, մեր մատենագրութեան 2000 տարվա պատճառախնդիր ժամանակագրական բաժանումները ներկայացնում է այսպիսի տախտակով:

Նա ամբողջ մատենագրութեան համար ընդունում է երկու միջոց — քրիստոնեութիւնից առաջ և քրիստոնեութիւնից հետո, իսկ այդ միջոցները ընդգրկում են երկու շրջան — հայերեն գրութիւնից առաջ և հայերեն գրութեամբ: Այդ երկրորդ շրջանը, որ ընդգրկում է 406—1850 թթ., կազմում է ազդեցութիւնների մի ամբողջ շղթա: Ուղղակի հունական մատենագրութեան ազդեցութիւն (406—500), «երկրորդ հունական լեզվագիտութիւն մըն ալ» (650—750), «հռոմեա-

¹ Մ. Արեղյան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հատ. 1, էջ 4:

և ան կամ ճշտիվ գերմանական քրիստոնեական մատենագրության ազդեցության տակ» և այլն. վերապես՝ «կես մը գաղիական, կես մը գերմանական և մասամբ իմն անգղիական ազդեցությամբ» (1830—40—1850)²։

Գաթրճյանը գրում է, որ «ազգի մը պատմության ծանրաշափն իր մատենագրությունն է»։ Այո, բայց ի՞նչ կարող է անել ծանրաշափը արտաքին ազդեցության այս հեղձանուտում։ Զարպհանալյանը այսպես է ներկայացնում հայ դպրության պատմության իր պարբերացումը.

«Մատենագրական պատմություննիս երկու զխավոր մասի բաժնած ենք—հին և նոր մատենագրություն։

Հինը՝ մեյմը Անգիր ժամանակաց մատենագրություն, քանի որ ազգը իրեն մասնավոր գիր կաս չմականան գործածած գրերը չունեն, մեյմըն ալ Գրավոր Կրավոր մատենագրություննիս ալ երկուքի կրնանք բաժնել։ Մեյմը սրբոյն Մեսրոպայ ձեռքով ազգային գրոց գյուտը չեղած, մեյմը ալ անկե ետքը։ Առաջինին կվերաբերին շորորոց գարուն մեջ երեցած մատենագիրք և երկրորդին՝ սրբոյն Մեսրոպայ գյուտեն մինչև ի Հովհաննես Երզնկացի», որովհետև «Երզնկացիեն ետքը լեզունիս ամենամեծ կերպարանափոխություն մը կկրեք»³։

Զամինյանի և մյուս հեղինակների մոտ ևս հիմնական սկզբունքը լեզուն է կամ արտաքին ազդեցությունը։

Ինչով բացատրել այդ։

Այն ժամանակ, երբ հայ մատենագրության նկատմամբ հետաքրքրություն արթնացավ, Եվրոպայում լավագույն ձևով ուսումնասիրված էր հույն և հռոմեական գրականությունը, այնպես որ դեռ լիովին չբացահայտված և չգնահատված մեր գրական արժեքները համեմատվեցին օտար օրինակների հետ և ստորադասվեցին նրանց։

Իսկ լեզուն պատմահամեմատական բանասիրության հետաքրքրությունների կիզակետն էր։ Լեզվական մեծագույն հետազոտությունները և մեռած ու հին ժողովուրդների լեզուների վերծանման լավագույն փորձերը պատկանում են XIX դարին։ Լեզվական մտածողությունը ճնշում էր բանասիրության մյուս ճյուղերը, և այն իրեն զգացնել է տալիս գրականագիտության մեջ ևս։

Հայ հին գրականության պարբերացումը չէր կարող առհասարակ լինել գիտական, քանի որ դեռ չկար առարկայի ճշգրիտ սահմանում, չէր որոշված գրականության ընդգրկման ոլորտը։ Գրականությունն անճիշտ զուգամիտվում էր մատենագրության հետ։ Սակայն մատենագրությունը գրավոր մշակույթ է, իսկ գրականությունը՝ գեղարվեստական իրողություն։ Առարկայի ճիշտ սահմանման դեպքում կպահանջվեր պարբերացման առանձին ելակետ։ Զարպհանալյանը հենց գործնականում կիրառում է ժամանակագրական պարբերացում «ընթերցողաց և սովորողների դյուրության համար»։

Դա թերևս ընդունելի է մատենագրության, բայց ոչ գեղարվեստական գրականության մեջ։

Որքան էլ տարօրինակ է, այսօր մեզանում, երբ այնքան որոշ են գրականության և մատենագրության սահմանները, հայ հին գրականության դասագիրքը ներկայացվում է ժամանակագրական պարբերացմամբ, որից մեկ դար առաջ արդեն հրաժարվում էր Գաթրճյանը իբրև ոչ գիտական սկզբունք. «Պատմության մեջ հարյուրական տարվո կամ դար դար բաժանում ընելու սովորության անրեական բան ըլլալը շատոնց ճանչցված է»,—գրում է նա։

Մինչաբեղյանական շրջանի պարբերացումները նրա համար կարող էին միայն ծառայել իբրև նախադրյալ, բայց ոչ երբեք հիմք։

Գրականության պատմություն ստեղծելու առաջին փորձից մինչև Աբեղյանը անցել էր մեկ դար։ Նոր գիտական պատմություն տալու համար շատ բան հաղթահարված էր, բայց դեռ մնում էին հիմնական դժվարություններ։

1. Չնայած բանասիրությունը հասել էր բավական մեծ արդյունքի, բայց դա քիչ էր, որպեսզի արտահայտեր այնքան հարուստ մատենագրություն ունեցող մի ժողովրդի գրականության պատկերը։

2. «Ներկորդ, դեռ չկար հայոց պատմության մի գիտական ուսումնասիրություն», որը կթեթևացներ գրականագետի աշխատանքը և կօգներ հայտարարել «տվյալ դարաշրջանի այն քաղաքական և սոցիալական իրականությունը, որի անդրադարձումն են եղել այս կամ այն գրական հիշատակարանները»։

2 Զ. Գաթրճյան, Պատմություն մատենագրության հայոց, 1851, էջ 3—4։

3 Նույն տեղում, էջ 2։

4 Զարպհանալյան, Պատմություն հայերեն դպրությանց, Վենետիկ, 1865, էջ 6—7։

3. Եվ վերջապես երրորդ՝ գրական և բանասիրական քննադատության մակարդակը Հին շրջանի համար գրական քննադատություն գրեթե չկար, իսկ բանասիրությունը գեո չէր ասե՝ իր վստահելի խոսքը տարրեր հեղինակների և օրկերի մասին, առկա թողել շատ խնդիրներ. նույնիսկ հեղինակների ապրած ժամանակը:

Գրականության պատմություն ստեղծելու համար Աբեղյանը պետք է մտներ այդ բոլոր՝ գրականագիտական-տեսական, պատմագիտական, ինչպես ինքն է ասում՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի պարզարանության և բանասիրական հարցերի մեջ:

Դրանից հետո միայն նա կարող էր տալ ճշգրիտ պարբերացում:

Տեսնենք, թե ինչ ելակետ է ունեցել Աբեղյանը իր պարբերացման համար. Հիմնականում զոյություն ունի երեք սկզբունք՝ լեզվի զարգացման աստիճանները, ազգի քաղաքական պատմությունը և հասարակարգի, այլ կերպ ասած՝ բազիսային կատեգորիան:

Լեզվի հարցը ընկնում է: Ինչպես տեսանք, այն հաշույն էր հայ գրականության նախնական պարբերացմանը:

Երկրի քաղաքական պատմությունը ես ելակետ չի ծառայել Աբեղյանի համար, չնայած նրա պարբերացումը մեծապես առնչվում է դրա հետ:

Անշուշտ, գրականության պատմությունը հաճախ է զուգամիտվում քաղաքական պատմությանը, որի լավագույն օրինակն է ոուս հին գրականությունը, «X—XVII դարերի ոուսական գրականության զարգացումը»,—գրում են ոուս գրականության պատմության ակադեմիական հրատարակության հեղինակները,—կատարվել է շատ ինքնատիպ պայմաններում: Նա ընդգրկում է գրավոր գրականությունը մի ամբողջի մեջ և մոտիկից հետևում պատմական ուղու թյունների զարգացմանը: Այդ պատճառով ոուս հին գրականության պարբերացումը (периодизация) չի կարող կառուցվել միայն գրական հատկանիշների հիման վրա, այլ ամբողջությամբ համընկնում է պատմության պարբերացմանը⁵:

Բայց միշտ չէ որ ժողովրդի քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները անմիջականորեն արտացոլվել են նրա գրականության մեջ:

Այդ առթիվ հետաքրքիր է հայ մատենագրության հմուտ հետազոտողի գիտողությունը. «Ազգի մը և ի մասնավորի ազգերնուս քաղաքային վիճակին հանկարծական փոփոխումը անմիջապես մատենագրության մեջ ալ հեղափոխություն մը միշտ չի բերեր»⁶:

Հիրավի «ի մասնավորի ազգերնուս» քաղաքական պատմության և գրականության զարգացման մեջ չի նկատվում եթե ոչ ուղիղ, ապա գոնե որոշակի համամասնություն: Քաղաքական ծանր ճգնաժամերը կամ համեմատաբար բարվոք վիճակներն ու կայունացումը միշտ չէ, որ համընկնում են մեր գրականության զարգացման կորագծին:

Պարբերացման ելակետ է ծառայում երկրի սոցիալական կյանքի պատմությունը, երբ հասարակարգի կամ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները փոփոխություն են առաջացնում և գրանով պայմանավորում գրականության զարգացումը: Այդպիսի պարբերացում է ընգունված վրաց հին գրականության համար: «Վրաց հին գրականության պատմությունը շրջանների բաժանելիս,—գրում է Կեկելիձեն իր ընդարձակ պատմության առաջարանում,—մենք իրրե ելակետային սկզբունք ընգունել ենք սոցիալական-տնտեսական փոխհարաբերությունների էվոլյուցիան, կամ եթե այլ կերպ ասենք՝ հենց ֆեոդալական հասարակարգի զարգացման էտապները, որի շրջանակներում է ընթացել վրաց հին գրականության պատմությունը»:

Դրան համապատասխան նա վրաց հին գրականության պատմությունը բաժանում է չորս շրջանների.

1. Վաղ ֆեոդալիզմի շրջան:
2. Զարգացած կամ ճորտատիրական ֆեոդալիզմ:
3. Ֆեոդալական միապետության անկման շրջան:
4. Ուշ կամ ճորտատիրական ֆեոդալիզմ (վերածննդի շրջան):

Աբեղյանը թերևս կարող էր նույն կերպ վարվել, բայց գա լիովին չէր բավարարի հայ հին գրականության խնդիրները:

Նախ՝ հայ ժողովրդի սոցիալական կյանքի պատկերը գիտականորեն որոշակի չէր ուսումնասիրված, որպեսզի կարելի լիներ սահմանել գրականության և նրա սոցիալ-տնտեսական հիմքի հարաբերությունը: Ավատական կարգերի սկիզբը, նրա զարգացման ու անկման շրջանները,

⁵ История русской литературы, Москва—Ленинград, 1958, т. I, էջ 22:

⁶ Գ ա թ Ր Ճ յ ա ն, Ն Վ. ա շ խ., էջ 5:

ներա ինքնօրինակ արտահայտությունը, նույնիսկ նրա գոյության հարցը գեոևս մնում էին թերմբոնման սահմաններում:

Երկրորդ, անընդմեջ արշավանքները և տիրապետողների հերթափոխը, քաղաքական հեղձուկը այնպես էր նստած ժողովրդի սոցիալական կյանքի վրա, թանձրորեն ու բազմաշերտ, որ մթազնել էր սոցիալական կյանքի պատկերը և նրա արտացոլումը իր գրականության մեջ:

Եվ վերջապես այստեղ ևս անհամամասնությունը չի բացառվում. «Արվեստի նկատմամբ հայտնի է,—գրում է Մարքսը,—որ նրա ծաղկման որոշ ժամանակաշրջաններ ամենևին չեն համապատասխանում հասարակության ընդհանուր զարգացմանը, հետևաբար նաև նրա նյութական զարգացման հիմքին, որը մի տեսակ հանդիսանում է հասարակական կազմակերպման կմախքը»:

Հպանցիկ նկատենք, որ պարբերացման այդ երկու ելակետերը չեն ենթադրում ինչ-որ անաղերս ինքնություն: Նրանք պայմանավորում են իրար, ինչպես երկրի քաղաքական կյանքը պայմանավորում է սոցիալականը և ընդհակառակը, սակայն նկատի է առնվում դերիշխողը:

Արեղյանը բռնում է այլ ուղի: Նա տալիս է հայ հին գրականության պարբերացումը, իր իսկ բնորոշմամբ՝ նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությունը: Այդ նշանակում է, որ նախադրյալ է ծառայում ոչ թե ինքը պատմական իրականությունը, երկրի սոցիալական և քաղաքական պատմությունը, այլ այն, ինչ առկա է գրականության մեջ: Նրա սկզբունքը առաջադրում է այսպիսի խնդիր՝ թե ինչ պատմական իրականություն է արտացոլել հայ հին գրականությունը և ոչ՝ թե ինչքան է արտացոլվել պատմական իրականությունը գրականության մեջ. այս վերջինը համարելով մի կողմից սկզբնաղբյուրային հարց, մյուս կողմից գրական երկի արտացոլման, նրա պատմահասարակական արժեքի չափանիշ:

Առաջին դեպքում՝ դուրս գալով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությունից, հետազոտողը գնում է դեպի նրա սոցիալ-քաղաքական պատճառները:

Երկրորդ դեպքում՝ իրրև նախադրյալ ընդունվում են երկրի սոցիալ-քաղաքական պայմանները, որից դուրս գալով՝ հեղինակը գրականության մեջ փնտրում է կամ վերածնունդ արտացոլման օրինակներ:

Ինչպես տեսնում ենք, մեկը ենթադրում է պատմա-գեղարվեստական վերլուծություն, մյուսը՝ սոցիոլոգիական:

Դրա համաձայն Արեղյանը հայ հին գրականության պատմությունը բաժանում է չորս մեծ շրջանների:

1. Նախնական առասպելա-պատմական բանահյուսություն:
2. Մաքառման կամ եկեղեցա-քաղաքական մաքառման գրականություն:
3. Վերածնության գրականություն:
4. Եկեղեցական գրականության վերածնություն:

Հետևենք բաժանման բովանդակությանը, իր արտահայտած պատմական իրականությամբ:

Ինչպես ասվեց, ավանդական պարբերացումը գրականությունը բաժանում էր երկու հիմնական շրջանների՝ բանավոր գրականության կամ անգիր դպրության (մինչև V դար) և գրավոր գրականության (V դարից հետո): Արեղյանը այդ համարում է ձևական և անսպասելի տալիս է առաջին հայացքից տարօրինակ իր բաժանումը. նրա մոտ երկրորդ շրջանը սկսվում է ոչ թե V դարից, ինչպես սովորաբար, այլ III դարից:

Ինչո՞ւ է արդարացվում այդպիսի բաժանումը, երբ երկու դար տևած բանավոր դպրությունը միակցվում է գրավոր դպրությանը—բովանդակությամբ:

Վաղուց ընդունված դրույթ է, որ ժողովրդի դիցաբանությունը դառնում է նրա գրականության հիմքը, հառնող գրականությունը սնվում է նրանից: Այդպես «հունական դիցաբանությունը հույն գրականության ու արվեստի հողն էր ու զինարանը»:

Բայց այդպես չեղավ հայ նորածագ գրականության համար, որովհետև քրիստոնեությունը իրրև հաղթանակած գաղափարաբանություն թշնամաբար էր տրամադրված իր նախորդի նկատմամբ:

II դ լավ է դիտել Պալասանյանը: Արեղյանը ևս նույն կարծիքին է.

«Ավանդական բանաստեղծությունը պետք է կազմեր հիմք մեր գրավոր բանաստեղծության. որի մեջ պիտի ցուար հայ ազգի հատուկ հանճարը, եթե միայն մեր գրականությունը գրերի գյուտից հետո շարունակեր իր սեփական ճանապարհով ընթանալը»:

Հենց այդ նկատի ունենալով նա մեր ավանդական բանահյուսությունը տարբերակում է գրավոր գրականությունից, իբրև նոր գաղափարախոսության վրա հենվող գրականություն: Բայց մի շրջան, երբ քրիստոնեությունը մտել էր հայերի մեջ և բանահյուսությունն արտահայտում էր համակիր տրամադրություն, Աբեղյանը պոկում է և ընդգրկում հայ գրականության զարգացման երկրորդ շրջանի մեջ:

Այստեղ կա սակայն մի հակասություն: Աբեղյանը առաջին շրջանը բնորոշում է այսպես. «Շրջանի կոչումը առասպելա-պատմական արդեն ցույց է տալիս այդ բանահյուսության ընդհանուր բնորոշ գիծը»: Նկատի է առնվում «Հայոց նախնական պատմությունն ու կրոնը, օտար ազդեցություններն ու միջազգային առասպելաբանությունը»:

Այդ շրջանի մեջ է առնված վիպասանքը, բացի Պարսից պատերազմից:

Վիպասանքը բնորոշվում է այսպես. «Առասպելից տարբեր ծագում ունի ավանդական վեպը (էպոսը): Մինչ առասպելներն ունեն ավելի դիցաբանական բնավորություն, շատ քիչ պատմական ազդեցություն են կրած և հաճախ փոխառություն են ուրիշներից, վեպն, ընդհակառակը, իր ծագումով ընդհանուր առմամբ բնիկ ազգային ինքնուրույն ստեղծագործություն է»:

Այս ձևակերպումը չի բռնում շրջանի ընդհանուր բնորոշմանը, որտեղ հիմնական է օտար ազդեցությունը և միջազգային առասպելաբանությունը, բայց համապատասխանում է Պարսից պատերազմին: Այդ դեպքում տարանջատումը չէր կարող այնքան էլ հիմքեր ունենալ:

Խերևս նա ընդունել է պատմության համապատասխան պարբերացում՝ նկատի ունենալով Արշակունիների շրջանը: Բայց դա ինքնամերժում կլիներ:

Այստեղ դեր է խաղացել մի ուրիշ արտաքին հանգամանք: Երկրորդ շրջանի սկիզբը, ինչպես տեսանք, նա համարում է III դարը, բայց գրականության պատմության մեջ շարադրանքը սկսում է անմիջապես V դարից, իսկ III—V դարերը, այսինքն Պարսից պատերազմ վեպը, ընդմիջարկում է, ոչ այնքան հաջող, դնելով առաջին պատմագիրներից հետո:

Հասկանալի է, որ այն իր տեղում չէ: Եվ այդ գլուխը ոչ թե միահյուսված է հայ գրականության պատմությանը, այլ տեղադրված: Այն եղել է առանձին ուսումնասիրություն, որը չի ապագրվել և Աբեղյանը ուղղակի մտքել է հայ հին գրականության պատմության մեջ:

Սակայն այստեղ էլ Աբեղյանը հավատարիմ է մնում իր սկզբունքին՝ ներկայացնել գրականության պատմությունը, նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրողություններ:

Շարունակենք հետևել նրա ընթացքին:

Երկրորդ շրջանը Աբեղյանը բնորոշում է իբրև մաքառման, կամ եկեղեցա-քաղաքական մաքառման գրականություն: Դա անսովոր էր մարդկանց համար, որոնք իրենց սկզբունքները քաղում են սոցիոլոգիայի այբբենարանից: Սակայն այդ բնորոշումը հիանալի արտահայտում է մեր գրականության առնչումը պատմության հետ՝ դարերի իր ելքուղում արտահայտում նրա քովանդակությունն ու միտումը: Աբեղյանն այստեղ գտել է ոչ միայն ոգին, այլև երանգը—Մաքառման գրականություն, և ոչ թե, ասենք, պայքարի կամ դիմադրության գրականություն: Մաքառում, որտեղ կա և՛ պայքար, և՛ ճիգ, և՛ հարատևության մղում: Դա այն բառն է, որ հիանալի բնորոշում է մեր ժողովրդի անցած ճանապարհը՝ վեճ և ողբերգական:

Այդպես էլ հետևում է Աբեղյանը մեր գրականության զարգացման ընթացքին, սկզբնավորումից ի վեր, որ նշանավորվում է գրերի հանճարեղ գյուտով:

Հայ գրերի գյուտը և ծավալված դպրությունը եկեղեցա-քաղաքական մաքառման արդյունք էին: Հայաստանը երկուսի բաժանվելով ստեղծվեց այնպիսի դրություն. որ այլևս անհնարին էր քաղաքական անկախության համար պատերազմ մղել հարևան մեծ պետությունների դեմ,—գրում է Աբեղյանը.—մնում էր միայն կուլտուրական պայքարը ներքին անկախության համար: Այս պայքարի մեջ դասակարգային շահերի տեսակետից պետությունը և եկեղեցին համերաշխում էին, որոնք նախորդ դարերում երբեմն իրար դեմ էին ելնում:

Կուլտուրական պայքար մղելու համար պետությունը պետք է հենվեր եկեղեցու վրա, որովհետև նա էր միակ ուժը և միջնադարի գաղափարախոսության կրողը, իսկ եկեղեցին այդ մեծ գործը ծավալելու համար անհրաժեշտորեն պետք է ունենար քաղաքական հենարան:

Այդպես է ստեղծվում մաքառման եկեղեցա-քաղաքական բնույթը:

Հետագայում, երբ պետությունն ընկավ, քաղաքական իշխանությունն անցավ եկեղեցուն:

Մաքառման ընթացքում եկեղեցին չպայքարեց արյունաքամ եղած պետության դեմ քաղաքական իշխանության հասնելու համար, ընդհակառակը, նա փորձում էր ամեն գնով կա-

8 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., հատ. 1, էջ 4:

9 Նույն տեղում, էջ 37:

սեցնել պետության անկումը, բայց պատրաստվում էր անհրաժեշտարար իր ձեռքն անցնող քաղաքական իշխանության:

Ահա այս է Արեղյանի տեսակետը. որի կողքին անհունչ են մնում ինչ-որ «ֆեոդալական ազգի կազմավորման», «ֆեոդալական պետականության քայքայման», «ֆեոդալական կարգերի հուժկու հենարանի» մասին տերմինարանական դատողությունները, որոնք արտահայտվեցին վերջերս գրականության մեջ:

Մենք չենք գտնում անհրաժեշտ ցույց տալ, թե ինչպես է կիրառում Արեղյանն այդ սկզբունքը գեղարվեստական երկերի վերլուծման ընթացքում, բայց այդ ճանապարհով Արեղյանը ցույց տվեց, որ մեր գրականությունը ոչ թե մի անհաղորդ ու հայեցողական դպրություն է, այլ հենց ինքը մի զենք՝ կուլտուրական պայքարի և մաքառման համար:

Դրանով է պայմանավորվում նրա սոցիալական արժեքը:

Արեղյանը ելնում է նրանից, թե ինչ պատմական իրողություն է բովանդակում գրականությունը, — այդ նշանակում է, թե նա ինչ պատմական իրողություն է դարձել: Դա կարող է եթե ոչ լիովին, ապա որոշ չափով չհամընկնել բուն պատմությանը իր առանձին կողմերով:

Արդյոք իր եկեղեցա-քաղաքական մաքառման տեսությամբ Արեղյանը մեր հին գրականությունը չի՞ զրկում սոցիալական բովանդակությունից, գասակարգային պայքարի խնդիրներից:

Դասակարգային հակամարտությունները, ինչպես նաև երկրի տնտեսական կյանքը, արտահայտվել են, իհարկե, մեր գեղարվեստական և հատկապես պատմական ու գավառաբանական երկերի մեջ, բայց այդ առանձնապես չի մտահոգել մաքառման շրջանի գեղարվեստական երկերի կերտողներին. նրա հիմնական ընույթը մաքառումն է:

Դա գիտակցված երևույթ է, որը գալիս է մեր պատմության ինքնահատուկ ընույթից: Ժամանակ չունենալով գլուխ բարձրացնել արտաքին հարվածներից, երկիրը անվերջ մաքառման մեջ էր: Բոլոր կենսական հարցերը ենթարկվում էին դրան: Սոցիալական կյանքի հակասությունները ոչ թե բացում էին կամ վերանում, այլ խլացվում էին գրա առչել ճիշտ է պատկերում մեր մարտաշունչ պատմիչը՝ ներկայացնելով մաքառման ելած երկրի դրությունը. «Ոչ երևէր այնուհետև առաւել տէրն քան զԺողայ և ոչ ազատ փափկացեալ, քան զգեղջուկ վրշտացեալ, ոչ ոք քան զոք նուազեալ յարութենէ: Մի սիրտ յօժարութեան ամենեցուն»:

Այդպես երևէր այնուհետև...» նշանակում է այնուառաջ երևացել, արտահայտվել է տիրոջ առավելությունը ծառայի նկատմամբ, բայց պատմիչի նպատակն է ստեղծել մի սիրտ յօժարութեան ամենեցուն» թշնամու դեմ:

Այդպես, Արեղյանն իր մաքառման տեսությունը հենել է այն բանի վրա, թե ինչ է արտահայտել մեր գրականությունը իրեն գեղարվեստական իրողություն, բայց երբ հարց է լինում սոցիալ-դասակարգային պատճառների բացահայտման, նա հայտարարում է նույնքան գիտականություն և կիրք:

Արեղյանն առաջինն էր, որ գրերի գյուտի մեջ տեսավ սոցիալ-դասակարգային պատճառներ. «Մաշտոցի սկսած և գլուխ բերած մեծ գործը...»-գրում է նա,— լուկ քրիստոնեություն քարոզելու համար չի եղել: Կային նաև ազգային-քաղաքական և դասակարգային պատճառներ, որոնց մասին լուր է Կորյունը, ժամանակի քաղաքական-եկեղեցական դժվարին պայմանների հետևանքով»:

Այդպիսի լուրջությունը բնորոշ է ոչ միայն Կորյունի, այլև ամբողջ մաքառման գրականության համար:

Նրբորոգ շրջանը Արեղյանն անվանում է վերածնության գրականություն (XI—XVII դդ.):

Իբրև վերածնության սոցիալ-պատմական հիմք Արեղյանն ընդունում է հարյուրամյա խաղաղությունը, քաղաքների բարգավաճումը, ազնվականության և հոգևորականության կողքին նոր դասակարգի՝ հարուստ քաղաքացիության երևան գալը, որի ձեռքին կուտակվում է հսկայական հարստություն, գրան զուգահեռ աշխատավորների կյանքի վատթարացումը, թոնգրակեցությունը՝ իրեն սոցիալական շարժում, գասակարգային պայքարի արտահայտություն:

Այս ամենը առաջ են բերում կյանքի և աշխարհայեցողության փոփոխություն, որը և արտացոլվում է գրականության մեջ:

Արեղյանը շատ չի կանգնում վերածնության սոցիալ-պատմական հիմքերի քննության վրա, բայց իր մեթոդին հարազատ բացահայտում է վերածնունդը՝ իբրև գրականության մեջ արտահայտված պատմական իրողություն:

Որո՞նք են, ըստ Արեղյանի, վերածնության գրականության բնորոշ կողմերը:

1. Հայկական վերածնությունն ինքնուրույն է՝ Եւ ազգային կուլտուրայի ու գրականության շարունակական զարգացման մի իրականություն է:

2. Նրա սկիզբը դժվար է զատորոշել՝ ինչպես և ամեն մի գրական հոսանքի, բայց և այնպես այն ծայր է առնում XI դարի սկզբներին և մեծ չղաձգումներով ու ցավագին շեշտերով տևում մինչև XVII դար:

3. Վերածնությունը ոչ թե ուղղակի սկսված և մեծ թափով ծավալված շարժում էր, որ ընդհատվեց քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով, ինչպես դիտվում է գրականության մեջ, այլ շատ դանդաղ, ընդհատումներով և անհավասար շարժում, որովհետև հենց սկզբից էլ երկիրը ենթարկվում էր պարբերական ցնցումների: Այնուամենայնիվ առաջագիմությունը այսպես կամ այնպես շարունակվել է:

4. Վերածնությունն ապրում է երկու շրջան (XI—XIV դարի երկրորդ կեսը և XIV դարից մինչև XVII դար):

5. Հայ վերածնության նախակարապետները գուսաններն են, եվրոպական վերածնության նախակարապետները տրուրադուրներն ու մինեգինգերները, բայց եթե այս վերջինները պարզապես նախորդում են վերածնության գրականությանը, իսկ հետո գիշում իրենց տեղը, ապա աշատվաղ դարերից ի վեր մինչև վերջը միշտ գոյություն է ունեցել գուսանական բերանացի երգը:

6. Եվրոպական վերածնունդը հենվում է անտիկ մշակույթի վրա, վերածնում է այն, բայց մեղ մոտ եղավար է տեսնել անտիկ գիտության, արվեստի և գրականության այնպիսի մեծ ծանոթություն և ազդեցություն, որի հետևանքով կերպարանափոխվել մեր եկեղեցա-ֆեոդալական գրականությունը:

Դա վերածնունդ էր հայ հեթանոսական կենսախինդ ոգու:

7. Վերածնության գրականությունը զարգանում է ոչ միայն եկեղեցա-քրիստոնեական գրականության կողքին, այլև նրա մեջ. Քրոմանդակության առաջխաղացումը լինում է կրոնական առեջքի վրա: Եւ մի տեսակ ինքնուրույն վերածնություն է քրիստոնեականի և հեթանոսականի միացումով:

8. Հայ բանավոր դպրության մեջ աշխարհիկ ոգին և կենսախինդ աշխարհայեցությունը վերածնության արդյունք չէ, այլ այն միշտ էլ եղել է և ոչ թե ծագել վերածնության ժամանակ:

9. Վերածնության շրջանում մեր գրականությունը ձեռք է բերում գրեթե բոլոր կարևոր թեմաները, որոնք որոշակիորեն ունեն սոցիալական շեշտադրություն:

Ահա այս են վերածնության ընդհանուր գծերը, որ դիտում է Արեղյանը գրականության մեջ:

Չորրորդ շրջանն Արեղյանն անվանում է տարբեր ձևերով. «Վերածնություն և նոր գրաբար մատենագրություն», «Հին լեզվի, ոգու վերածնություն և նոր գրաբար մատենագրություն», որը ծանոթագրում է այսպես՝ «վերածնություն ոչ եվրոպական գրականության իմաստով, այլ վերակենդանացում», «Հնի, կրոնա-եկեղեցականի վերածնություն և նոր գրաբար գրականություն», «Գրականության աշխարհիկացումը՝ արդյունք հայկական ինքնուրույն վերածնության» և վերջապես՝ գրելիքում, այսինքն ձեռագիր նշումների մեջ՝ «Գրականության նորոգումը XVII—XIX դարերում»:

Ինչպես հայտնի է, Արեղյանը իր գրականության պատմության երկրորդ հատորը չի հասցրել ավարտի: Այն նրա նյութերի հիման վրա կազմել և հրատարակության է պատրաստել ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը և չորրորդ շրջանի համար իբրև խորագիր ընտրել է վերջին ձևակերպումը:

Մեր կարծիքով դա այնքան էլ հաջող չէ. նախ՝ չի արտահայտված նրա կողմից տպագիր խոսքով, և ապա՝ շարադրանքի մեջ չի գործածում նորոգում, այլ անվերջ՝ վերածնություն. «Սկսվեցավ մի վերածնության շրջան», «սկսվում է ծնվել նորը հնի վերածնությամբ», «մինչ հնի վերածնությունը հենց սկզբից զորեղ է», «հնի մեռելության մեջ վերածնություն առաջ են բերում», «այդ մարդիկ իբրև վերածնողներ» և այլն: Իսկ նորոգում բառը նա գործածում է ավելի առարկայական հասկացությունների համար. «Մտածում և գործում են մեր խոսակցացած կյանքը՝ նորոգելու համար», «հնարավոր է լինում ոչ միայն բազմաթիվ հին վանքեր նորոգել» և այլն:

Բնորոշ է, որ «Վերջին ծայր հասած ավերմունքից հետո անմիջապես նորոգության ձեռնարկություն սկսվեցավ և այն շատ կողմերից» նախադասությունից ուղղակի շարունակում է. «Սկսվեցավ մի վերածնության շրջան հայոց կյանքի և գրականության մեջ»:

Այսպես ուրեմն, վերածնություն հին կյանքի նորոգմամբ:

Արեղյանը մի քանի անգամ փոխել է վերնագրի ձևակերպումները, ելնելով այդ շրջանը եվրոպական ըմբռնմամբ վերածննդի հետ շփոթելու մտավախությունից:

Սակայն բանասիրության մեջ, հենվելով Գրականության ինստիտուտի կողմից նախընտրած խորագրի վրա, միտք է հայտնվել, որ իրր թե Արեղյանը հետազայում հրաժարվելով այդ վերնագրերից իր տեսակետը արտահայտելու էր Պրականության նորոգումը XVII—XIX դարերում խորագրով, համապատասխան փոփոխություններ մտցնելով և շարադրանքի մեջ, որ ցավոք չհասցրեց կատարել:

Եվ ահա փորձ է արվում անելու այն, ինչ, ցավոք, չհասցրեց Արեղյանը, վերածնություն բառը փոխելով վերանորոգում բառով:

«Արեղյանը ցույց է տալիս,—կարդում ենք մենք,—որ այդ նորոգումը կարող էր երկու ուղղությամբ զնալ՝ վերանորոգել հին գիրն ու գրականությունը և օգտվել եվրոպական լուսավորությունից: Հենց այս երկու ուղղությամբ էլ զնաց վերանորոգումը: Առաջինը սկսվեց Սյունյաց անապատի հիմնումով Սարգիս Ամրեղցու, Կիրակոս Տրապիզոնցու, Մովսես Սյունեցու և նրանց աշակերտների ջանքերով, որոնք հավաքում են ձեռագրեր, արտագրում, վերանորոգում, ստեղծում դասագրքեր, կատարում թարգմանություններ և այլն: Եթե խոսում ենք մտավոր վերանորոգման մասին, ապա դրա կենտրոնները էջմիածինը և Նոր Զուղան էին: Պակաս դեր չի խաղում վերանորոգման մեջ նաև երկրորդ ուղղությունը¹⁰»:

Այսպես, վերանորոգել հին գիրն ու գրականությունը, վերանորոգել ձեռագրերը, մտավոր վերանորոգում: Զեռագրեր վերանորոգելը հասկանալի է, բայց հին գրի վերանորոգումը և մտավոր վերանորոգումը մնում է անպարզ:

Դա բոլորովին էլ չի հիշեցնում Արեղյանի տեսությունը:

Այնուհետև՝ վերածնությունը փոխարինվում է աշխուժացմամբ (սայնինչ խոսք կարող է լինել միայն աշխուժացման մասին): Աշխուժացում նշանակում է անընդհատ շարժման մեջ ավելի մեծ կորագիծ: Արեղյանը այլ կերպ է ներկայացնում մեր կյանքի և գրականության պատկերը XVII դարում:

XVII դարի սկզբին անկումն իր վերջին ծայրին է հասնում Շահ Արրասի և Ջելալինեդի ավերումով: Այդ վերջին ավերմունքը և վերջին հարվածն է տալիս հայոց հին քաղաքակրթությանը, որ արդեն նվազած էր շատ, — դրում է Արեղյանը: — Հայերն այնուհետև կամ պետք է ունենային և վայրենանալով ընկնեին և կամ եթե ազգի մեջ կենսունակության դեռ ուժ կար, մեծ ջանքերով նորից ձգտեին կենդանության: Բարեբախտաբար այդ ուժը կար... Սկսվեցավ մի վերածնության շրջան հայոց կյանքի և գրականության մեջ, որ սկզբում շատ դանդաղ առաջ զնաց Հայաստանի անկայուն քաղաքական դրության պատճառով և հետո՝ շատ արագ քայլերով:

Մի պարբերություն հետո Արեղյանը գրում է. «Եվ հնի հենց այդ մահվան մեջ է, որ սկսում է ծնվել նորը՝ հնի վերածնությամբ: Եվ վերջապես՝ «Մեր նոր գրականությունն սկսվում է XVII դարում, և այս վերջին երեք դարերը (XVII—XIX) շարունակություն են միմյանց: XVII դարն է միայն, որ շարունակող չի նախորդին, այլ միայն վերածնող»¹¹:

Այս քաղվածքներից պարզ է, որ խոսք չի կարող լինել սոսկական աշխուժացման մասին: Դա նոր շարժում էր, «վերածնություն ոչ եվրոպական իմաստով»:

Այսպես, Արեղյանը մեր գրականության զարգացման չորրորդ շրջանի բովանդակությունը համարում է հնի, այսինքն XI—XIV դարերի վերածնությունը և այն կապում ոչ թե XVIII դարի և Մխիթարյանների հետ (ինչպես արվում է սովորաբար), այլ XVII դարի հետ, շարժում, որ սկսվում և ծավալվում է բուն Հայաստանում:

Այս է հայ հին գրականության պատմության՝ Արեղյանի տված չորս մեծ շրջանների կարճատև ընթացիկը:

Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» հայագիտության մեծագույն նվաճումներից է: Նա մեր հին գրականության սեղ տեսավ ոչ թե ինչ-որ մեղնող ոգու թույլ ստվերում, ներ, ողոր, անգոր տառապանքի ջղաձգություններ, հետևակ վերքաղություն, այլ հեթանոսական կենսուրախ, շունչ, մաքառում, վերածնություն և վերակենդանացում:

Արեղյանը մեր մաքառման դարերի և իր մեջ ձգեց տրամաբանության մի անխախտ կամուրջ, որի վրայից այսօր քայլում է ինքը՝ այդ մեծ մտածողը՝ հաստատ և հպարտ:

¹⁰ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 260:

¹¹ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. II, էջ 437, 440: